ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը մեկնարկել է «100 գաղափար Հայաստանի համար» նորարարական նախագծերի և գիտատեխնիկական մշակումների մրցույթի կազմակերպման աշխատանքները:

Մրցույթի նպատակն է զարգացնել երիտասարդների նորարարական մտածողությունը, ներգրավել երիտասարդներին Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման խնդիրների լուծման գործընթացներում, խթանել գիտատեխնիկական մշակումներն ու նորարարական նախագծեր իրականացնելու քաղաքացիական նախաձեռնությունները:

Մրցույթն անցկացվում է հետևյալ անվանակարգերով՝

1. Ֆիզիկամաթեմատիկական գիտություններ
2. Քիմիական գիտություններ
3. Կենսաբանական գիտություններ
4. Տեխնիկական գիտություններ
5. Գյուղատնտեսական գիտություններ
6. Պատմական գիտություններ
7. Տնտեսագիտություն
8. Բանասիրական գիտություններ
9. Իրավաբանական գիտություններ
10. Մանկավարժական գիտություններ
11. Բժշկական գիտություններ
12. Դեղագործական գիտություններ
13. Արվեստագիտություն
14. Ճարտարապետություն
15. Հոգեբանական գիտություններ
16. Ռազմական գիտություններ
17. Սեցիոլոգիական գիտություններ
18. Քաղաքական գիտություններ
19. Գիտություններ երկրի մասին
20. Տեղեկատվական տեխնոլոգիաներ

Մրցույթին կարող են մասնակցել Հայաստանի և սփյուռքի 16-35 տարեկան երիտասարդներ կամ հեղինակային խմբեր:

Հայտերն ընդունվում են 2021 թվականի սեպտեմբերի 18-ից մինչև հոկտեմբերի 25-ը ներառյալ:

Հայտերն անհրաժեշտ է ուղարկել youth@escs.am էլեկրոնային հասցեով՝ էլեկտրոնային փոստի՝ համաձայն **ձևաչափի՝** «Թեմա» բաժնում նշելով մրցույթին ներկայացվող գաղափարի անվանակարգը:

Մրցույթին ներկայացված գաղափարներից մրցութային հանձնաժողովը կընտրի լավագույն 5 գաղափարները, որոնք կպարգևատրվեն դրամական խրախուսմամբ՝ **մինչև 500.000-ական դրամի չափով:**

Մրցութային հանձնաժողովը առավելությունը կտա այն գաղափարներին, որոնք ունեն.

- կիրառական նշանակություն,
- առաջարկում են միջգիտակարգային լուծումներ,
- ապահովում են ներկայացված գաղափարի շարունակականությունը,
- գաղափարն իր մեջ պարունակում է հանրային մասնակցության բաղադրիչ: